

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«12» ՄԱՅԻՍԻ 2014 Թ. N 41-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՎԱՐԴԱՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանի միջնորդությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, դատապարտյալի հետ անթույլատրելի կապերի մեջ գտնվելու, այն է՝ դատապարտյալին փոխանցելու նպատակով իր հետ 5 (հինգ) հատ բջջային հեռախոսներ, ինչպես նաև բջջային հեռախոսի 1 (մեկ) էլեկտրական լիցքավորիչ և արգելված այլ իրեր քրեակատարողական հիմնարկ անցկացնելու փորձ անելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի կրտսեր մասնագետ Վարդան Գագիկի Ծատուրյանի նկատմամբ կիրառել ծառայությունից ազատում կարգապահական տույժը և 2014 թվականի մայիսի 13-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ